

ԴԱՐՁՅԱԼ ՄԻ ԲԱՆԻ ԷՋ ՀԱՅ ԵՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

Հայ միջնադարի մտավոր կուլտուրական կյանքը, ինչպես հայտնի է, գլխավորապես կենտրոնացած էր վանքերում: Այդ տեղերում էր, որ մեր «անհաս գրիչ»-ները գրում կամ ընդօրինակում էին ձեռագիր մատյաններ, ծաղկողները և մանրանկարիչները ծաղկում, ոսկում և զարդարում էին այդ ձեռագիրները: Վանքերի պարիսպներում էին ապրում և ստեղծագործում մեր տաղերգու բանաստեղծները, փիլիսոփա-երաժշտագետները՝ ու «գեղերիջանիկ» վարդապետներն ալմանդում ժամանակի սխուլաստիկ գիտությունը ուսումնաստենչ երիտասարդներին և պատանիներին: Իրենց դասախոսությունները և առօրյա գործնական պարապմունքները բավարար չհամարելով մեր մանրանկարիչ վարպետները, ինչպես և հմուտ երաժշտագետները, կազմիլ էին իրենց ձեռնարկները նորահասների գեղարվեստական կրթությունը լրացնելու, ինչպես և հեռակա ուսանողներին ու այդ արվեստներով հետաքրքրվողներին սպասարկելու համար: Մանր նկարչության այդ ձեռնարկները ընդհանուր անվամբ կոչվում էին Պատկերասույց, իսկ երաժշտագիտության ձեռնարկները Մանր ուսմունք կամ մեկ բառով Մանրուսմունք:

Եթե պատկերասույցների մեջ մանրանկարիչ վարպետները սովորեցնում էին ներկերի պատրաստումը և նրանց գործածության ձևերն ու տեխնիկան, ապա մանր ուսմունքների հեղինակներն կամ կազմողները, զբաղվում էին «առողջանության խազերի», «երգողական նշանների» ու բազմատեսակ ձայնանիշների ուսմունքով, վերծանելու կամ երգելու համար վարժողա-

կան նմուշներ տալով իրենց ժամանակի հայտնի եկեղեցական և աշխարհիկ երգերից ու եղանակներից: Մանրուսմունքներ կան, որ ավելի ևս նման են երաժշտական քրեստոմատիաների. նրանք ոչ թե սկզբնական ձեռնարկներ են տարրական երաժշտագիտության, այլ պարունակում են իրենց մեջ երգերի ու շարականների պարզ և բարդ հատվածներ արդեն երաժշտություն գիտեցողներին համեմատաբար ավելի բարձր կրթություն տալու համար:

Երևանի Պետական Մատենադարանում, Երուսաղեմի հայոց վանքի գրադարանում, ինչպես և Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների մոտ մեզ հասած Մանրուսմունքների թիվը հասնում է երեք տասնյակի: Նրանք ընդօրինակված են 13—17-րդ դարերում ավելի հին օրինակներից, որոնք չեն հասել մեզ:

Անշուշտ ցանկալի կլինի իմանալ, թե ո՞վքեր են եղել Մանրուսմունքների սկզբնական օրինակների հեղինակները կամ իմբագրողները: Անկասկած եղել են ներանք, որոնք այս կամ այն դարում, այս կամ այն կենտրոնական վայրում կանդնած են եղել երաժշտական դպրոցների ղեկավար:

Հաջորդ դարերում այդ ձեռնարկները լրացրել են նոր նյութերով, նորից խմբագրվելով փոփոխություն են կրել ու դարձել էությունով աշխատանքի պտուղ: Նրանց մեջ, բացի շարականներից, դանձերից, մտել են նաև հատուկ եղանակներ (ալելուներ, փառեր, կցուրդներ) օրվա այս կամ այն պահին ժամերգության, այս կամ այն

ծիսակատարության ժամանակ երգելու: Այդպիսիներից են Ալեյուֆ գիշերության, Ալեյուֆ Գաշի, Գաշ մեսեդիֆ. կիբակնամտի փառեր, տերոդոմիայի տոնից, կրցուդներ, հանգստյան, մեսեդիֆ ապաշխարության, խոնարհեսցուֆ հասարակաց և այլն:

Ներսես Շնորհալիս խստապահանջ է եղել քահանաների երաժշտական կրթության վերաբերյալ. նրանք ձեռնադրվելիս պարտադիր կերպով պետք է գիտենային մանրուսմունքները, որպեսզի ճիշտ կանոններով և անթերի կատարեն ժամերգությունը:

«Թեև ոչ ամենեցուն ամենայն շնորհ կատարեալ լինել անհնար է, սակայն (նորա) ի հարկավորսն պարտ են անթերի լինել, այսինքն եկեղեցական պետս ուղիղ ընթերցում և մանրուսմունս ձայնավորացն պաշտել եկեղեցիս և ապա գալ ի ձեռնադրութեան քահանայութեան»:

Մեկ ծանոթ 18 մանրուսմունքներից (Երևանում 6, Վիեննայում 8, Վենետիկում 4) ամենահինը ընդօրինակված է մագաղաթի վրա Կիլիկիայի Սկևռա վանքում (Ձեռամբ բազմամեկ քահանայի և անպիտան գրչի Ստեփաննոսի ի լաւ յընտիր աւրինակաց» (Երևան, Մատենադարան, ձեռագիր 680):

Ունի այսպիսի հիշատակարան:

Փառք... գրեցաւ առաջաբանս և տետրակս մանրուսման և թվին հայոց Չիլ ի հայրապետութեան տեառն Յակոբայ և ի թագաւորութեան Լեոնի, որդոյ Հիթմոյ, ի հռչակաւոր անապատս Սկևռայ ընդ հովանեաւ սր. Փրկչի և մաւր լուսոյ Ածածնի...»:

Երկրորդը ժամանակագրական կարգով գրված է Չիլ (1279) թվին «ի ձեռն Յոհանն քահանայի ի զղեակն Բաբերդ ի գաւառն Խախտեաց»: Գտնվում է Երևանի մատենադարանում (ձեռագիր, № 672):

Թվական ունեցող Մանրուսմունքներից այս երկուսով էլ վերջանում է 13-րդ դարը: Սակայն նույն Մատենադարանում կա մի անթվական մանրուսումն (№ 919),

միայն մագաղաթի վրա: Հստ երևույթին պատկանում է ավելի վաղ շրջանի:

Այուհետև գալիս են 14-րդ դարում գրված Մանրուսմունքները թվով 7: Նրանցից առաջինը պատկանում է 1313 թվին և գրված է «Ի սուրբ և հռչակաւոր անապատս Դրազարկ», Ստեփաննոս գրչի ձեռքով: Ձեռագիրը գտնվում է Վենետիկում, Մխիթարյանների գրադարանում: Ահա մի պատառիկ նրա հիշատակարանից:

Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսումն ի թվ. ՉԿԹ ձեռամբ և մեղսաթաւ սուտանուն գրչկայ Ստ. ի սուրբ և հռչակաւոր անապատիս Դրազարկ...» (Ալիշան, Միսվան, 738):

Երկրորդը, որ գրված է 1314 թվին ընտիր մագաղաթի վրա, գտնվում է Երևանի Պետական Մատենադարանում (№ 673), գրության տեղն անհայտ է հիշատակարանի թերի լինելու պատճառով:

Երրորդը և չորրորդը, որ գտնվում են Վենետիկում, գրված են 1325 և 1336 թվերին, Գալու վանքում Սիմեոն քահանայի ձեռքով: Ալիշանը իր Միսվանում առաջ է բերել 1336 թվի Մանրուսմունքի հիշատակարանի նմանահանությունը:

«Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի մանրուսումն: Ի թուիս հայոց ՃԶԵ ի թագաւորութեանս հայոց Լեոնի ածասիրի և բարեպաշտի, որդոյ ի Քս ած հանգուցեալ թագավորին Աշինի»:

Եւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ ի սր. անապատս որ կոչի Գալու: Ընդ հովանեաւ սր. ածածնիս և այլ սրբոցս որք աստ: Ձեռամբ բազմամեկ և անարժան քահանայի Սիմեոնի»:

Հինգերորդը գտնվում է Վիեննայի Մխիթարյանների մոտ (ձեռ. № 183): Գրված է 1340 թվին, տեղը անհայտ, գրիչը և ծաղկողը Մկրտիչ երեց:

Վեցերորդը (Երևան, Մատենադարան № 559). գրված է մագաղաթի վրա 1353 թվին Ղրիմում:

«Գրեցաւ տետրակս որ կոչի Մանրուսումն յաշխարհս Ղրիմիս ի Սուրխաթ քահանայի»:

և հայրապետութեան տեառն Ստեփաննոսի և ի թագաւորութեան Կոստանդիանոսի... ի թուականին հայոց Պ. Ա. Ձեռամբ Գրիգորի Սուրբասեանց»:

Նույն 14-րդ դարին է պատկանում Արքայակաղնի վանքում (Կիլիկիա) գրված մի ընտիր Մանրուսումն (Վենետիկ), որի մասին այնքան գովեստով է խոսում Ալիշանը: Ձեռագրի հիշատակարանում կան այսպիսի տողեր.

«Գրեցաւ եղանակաւոր տառս՝ որ կոչի Մանրուսումն ի լաւ և յընտիր օրինակէ... զոր յարմարեալ էին երաժշտասէր Արքայակաղնոյ», բայց, ինչպես նույն հիշատակարանի ներքեւում բերված նմանահանությունից երևում է, Արքայակաղնում միայն երաժշտասէրք չեն եղել, այլ եղել են և երաժշտապետք (Սիսուան, էջ 234):

Հասնում ենք 15-րդ դարը: Դարասկըզբներում, 1405-ին գրված Մանրուսումն պատկանում է Ավագ Վանք կոչվող «Մեծափառ անապատին» — բայց ընդօրինակված է, կամ ինչպես հիշատակարանն է վկայում, «յարմարած է առաջին երաժշտապետացն սբ. ուխտիս Արքայակաղնոյն»: Ձեռագիրը գտնվում է մեր Մատենադարանում (№ 674):

Ժամանակագրությամբ հետևյալ յոթ Մանրուսումնքները պատկանում են Վիեննայի Մխիթարյանների գրադարանին. դրանցից առաջինը գրված է 1421 թվին, զարդարված է բազմագույն նկարներով, գրիչն է Հովհաննես, ծաղկող և ոսկողը Մելիքսեթ երեց: Ունի այսպիսի հիշատակարան:

«... Կատարեցաւ ցանկալի երգարանս երաժշտական ձայնաւորացս ի թուականութեան Հայկական տումարի Պ. Հ. (1421)... ի սոյն ժամանակս գրեցաւ տետրակս ի սբ. և ի գերահռչակ ուխտս, որ կոչի Սանահին... Ո՛վ դասք լուսերամից և քաղցրանուագ երաժշտապետք, որք օգտիք ի սմանէ և վայելէք զմեղաւոր գծողս յիշեցէք»:

Երկրորդ (№ 403) գրված է նույնպես մագաղաթի վրա Բոլորածոր անապատում 1484 թվին: Ունի բազմագույն նկարներ և գեղեցիկ թռչնագրեր:

«Փառք... որ ետ կարողութիւն անարհեստ գրչի անարժան Աբրահամի սոսկ անուամբ արեղայ կոչեալ և ոչ գործով. զի գրեցի տետրակս և ոսկով զարդարեցի և կապեցի վայելումն անձին իմոյ և հոգեւոր հօրս և ուսուցչի և հօրեղբօրս իմ Աւագ տէր վարդապետի»:

Հետևյալ երեք Մանրուսումնքները գրված են նույն դարում, գրության տեղն անծանոթ:

Վերջին երկուսը պատկանում են 17-րդ դարին, մեկը գրված է 1633-ին, տեղը անհայտ, մյուսը՝ 1641-ին, Սեբաստիայում: Այդ ձեռագրի հիշատակարանի տակ գրված է.

«Զտէր Յակոբ բանի սպասաւորն յիշեա ի տէր ով երգեցող եղբայրք...»:

Այսպիսով վերջանում է մեզ ծանոթ Մանրուսումնքների գրության դարը: Նույն դարում մեզ հայտնի է դառնում ևս մի «խազգիրք», գրված 1677-ին Մաղարթա վանքում (Մեսրոպ եպ. Սմբատյան «Ներընչակ», էջ 121):

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Առաջին անգամ Վենետիկի Ս. Ղազարի վանքի գրադարանում եղած Մանրուսումնքների միջից հանելով՝ Ալիշանը իր «Սիս-

վանում» (1885) տպագրեց թվով 70 եղանակների անուններ, որոնք հետևյալն են՝

Աղաչանք
Աղավնեկ
Անմեղուկ
Անձեղ կամ Զիթ
Արծիվ

Գոճնակ
Գույնիկ
Գոռզ
Գուանակ
Դաւուկ

Առվոտ երգ
Աշկերտն
Այսօր մտանե
Առեղն կամ Հոնեղ
Գարբիել
Գալ
Գլաժ
Խեղեփ
Խոսող
Ծովցի
Կաղ
Կատու
Կարմիրվանքեցի
Կիրակոս երեց
Կողեռն
Հավատովոր
Հիվանդ
Հոռոմն
Հովիվ
Հորնձին
Ձագ
Ճինկան կամ Ծչող
Մակեդոնացի
Մամկոն
Մասնակն
Մատն
Տարոնցի
Տժգույն
Տոկատն
Տոպոսպայն

Դարբին
Եկեղեցու
Զոհող
Բագավորն
Իրիցկին
Լալկան
Խաբուսիկ
Մեղուն
Մշեցի
Հետքարշ
Շնորհազարդ
Ովեսայն
Ուղտն
Չորուկ
Ջանրիկ
Ջուհակ
Ռահուվար
Սալ
Սարկավագ
Սերոբե
Սուրբնշանցի
Ստեղն
Վարսեղն
Վաշտարիկ
Տանուտրակ
Տարածումն
Ցինայն
Փող
Փոթակն
Քնքշակն

1844-ին էջմիածնի «Արարատ» ամսագրի
մեջ Կոմիտաս վարդապետը «Հայոց եկեղե-
ցական եղանակները» իր անդրանիկ հոդ-
վածում, անշուշտ վանքի մատենադարա-
նի Մանրումունքներից հանելով, բերում

է մի նոր ցանկ, որի մեջ կան թվով 14
այնպիսի եղանակների անուններ, ինչ որ
չկան Ալիշանի առաջ բերած ցանկում:
Այդ եղանակներն են՝

Անձեր
Առյուծ
Արջն
Ավելի
Բագե
Բոռ
Բրավոր
Բդեշխ
Եզնակ
Էրեւթ

Բերդ
Գալստյան
Գետ
Մովսես
Յավնեղն
Յեղմն
Յեղմուկ
Յովհաննիսուկ
Նավ
Շահյան

Զողատող
 Իմաստնուկ
 Խաչի
 Միծեռն
 Մնծղա
 Կակղոտ
 Կիրակմտի
 Կրեստ
 Կցխակ
 Հաս
 Հոռմակ
 Ծոխ
 Մառեխ
 Մեծ պուխ
 Մեռելքաղ
 Միքայել

Շավան
 Ոչխար
 Պարբնգուլ
 Պիծակ
 Զաղացք
 Զորեքաշ
 Սրինգ
 Վարուժնակ
 Տիրոցի ձագ

Սահակ Վ. Ամատունին իր «Բառ և բան» բառարանի մեջ բառերի շարքում բերում է 88 եղանակի անուն, որոնք գրեթե նույնն են. եթե Կոմիտասի ցանկից չի օգտված, ապա քաղված են էջմիածնի Մանր-ուսմունքներից:

Կոմիտասն իր առաջ բերած եղանակները բաժանել է բուն ութ ձայնի մեջ՝ անուն—անուն թվերով: Առաջին ձայնի, 23, առաջին կողմի 12, երկրորդ ձայնի 12, ավագ կողմի 11, երրորդ ձայնի 13, վառ ձայնի 20, չորրորդ ձայնի 18, չորրորդ կողմը 14:

Տես «Կոմիտաս — Հոգվածներ և ուսումնասիրություններ» էջ 121—125):

Արևմտահայ բանասեր Դավիթ Խաչկոնցը իր «Հայոց կրոնական բանաստեղծությունը» աշխատության մեջ (Թիֆլիս, 1904 թ.) գրեթե նույնությամբ առաջ է բերել վերը հիշված եղանակների՝ Կոմիտասի կազմած ստորաբաժանումները, առանց աղբյուրը հիշատակելու:

Միջնադարյան հայ մտավոր կուլտուրական կյանքում գոյություն են ունեցել և «Ոսկեփորիկ» կոչվող ժողովածուներ, որոնց մեջ հավաքված են զանազան գիտելիքների, գիտությունների, արվեստների, կրոնական ու բարոյախոսական գրականությունից մանր հատվածներ թեթև ընթեր-

ցանության համար: Այդ ոսկեփորիկներում մեջ մենք պատահում ենք հրաժշտության տեսականի, պատմականի և գործնականի մասին զանազան հատվածներ, որոնք անկասկած, ընդօրինակված են Մանրուսմունքներից:

Վենետիկի Մխիթարյան գրադարանում գտնվող 14-րդ դարում գրված մի Ոսկեփորիկի մեջ (№ 248) ահա ինչպիսի մի հատված կա հրաժշտական տեսական վերաբերյալ արաբական աղբյուրներից:

«Համառոտ հրաժշտական արուեստ է յարապ' գրոց: Խնդրող եթէ ոք իցէ արուեստի հրաժշտականութեան, գիտասցէ զհրաժշտականութիւն գիւտ մի է և գիւտ ստուգաբան իմաստնոց. և գրութիւն նորութեան հոգւոց կենդանեաց է և ոչ մարմննոց, զի մարմինք անհոգիք ոչ ունեն մատուցի նմանէ: Եւ հրաժշտականութիւն է արուեստ մի՝ յօդեալ ի մարմնականէ և ի հոգևորականէ. և գիւտ ողբոց և խնդութեան ի նմանէ...» և այլն:

«Թարգմանության ժամանակը չի գիտացվիր», ասում է Վենետիկյան ձեռագիրների ցուցակը կազմող Հ. Բ. Սարգիսյանը: «բայց թարգմանիչը հրաժշտագետ մեկը ըլլալու է, այն և կամ Գրիգոր Մազիստարոս կամ Ներսես Շնորհալի» (ցուցակ Բ, էջ 694): Նույն գրադարանի մի ուրիշ ձեռագիր Ոսկեփորիկ (№ 288), որ պատկանում

12—13-րդ դարերին, իր մի քանի էջե-
րում պարունակում է «Անուանք եղանա-
նաց, ձայնից երգող», հայկական ամենա-
նորը խաղերով: Այդ եղանակների անուն-
ներն են՝ «Արաշեշտ, Քարշ, Ստորագիր,
Դժարագիր, Վանդ, Կուռկուռ, Զգեհին, Խաղ,
Բող, Մընկեր, Հար, Հարկորա, Բեր, Բազ-
արեղ, Անար, Ողամանեակ, Հարուկ, Ձայն-
արձ, Հանգուց, Խուճ, Դոյն, Քմազարդ...»,
այս պ Քմատորոփ, Ծանրատորոփ, Թագատորոփ,
զորն են թվով ԻԴ և է ի դոցան է գլխավոր
ն ըստ է եղանակաւոր գրոյն որք են Ա. Ե.
Բ. Ի. Ո. Խ. և այլդ խառնուրդ են որ-
մես զանազան անուշահոտ համեմք հա-
տադամ կերողաց» (Յուցակ Բ, էջ 775):

Երուսաղեմի հայոց վանքի գրադարա-
նում եղած մի ձեռագիր խազգրքից առնե-
լով, տեղի «Սիրոն» ամսագրի 1867 թվի
8-ում տպագրված է մի տեսություն,
որի մեջ քիչ տարբերությամբ առաջ են
ներկայացված նույնանուն եղանակները իրենց
առաջանշաններով:

Մի երրորդ Ոսկեփորիկի մեջ Վենեսի-
ն գրադարանում (ձեռ. 287), գրված 16—
17-րդ դարերում, կա մի հատված «Յա-
նագս երաժշտականաց», որ սկսվում է
արց ու պատասխանով:

Հարց.— Զի՞նչ է երաժշտականն.

Պատ.— Ի երկու բաժանի ի հոգևորն
ի մարմնաւորն, այսինքն ի բանականն
ի քնարս կամ եկեղեցական հոգևոր
արգս և յարտարին դուտանն...

«Երաժշտական այս կրկին բաժանմուն-
քն,—գրում է ցուցակի խմբագիրը, հիա-
նալի կերպով բարդավաճած է գրվածքիս
անհայտ հեղինակը, նկարագրելով նախ
կեղեցական խաղերը և անոնց հարմա-
նությունները» ու առաջ է բերում խազերի
անունները: «Զոր իմաստուն երաժիշտը
կեղեցույ իմաստութեամբ երգեն զխազսն
այնաւորաց և ճանաչեն և բաժանեն ի մի-
ջանց զարուեստաւորսն և զառոգանութիւն-
քն, այսինքն, զՇեշտն և զԲուֆն, զՊարոյկն,
Երկաթն, զՍուլն, զԲենկուրճայն, զԴաս-
ուրճայն և զՉայկուրճայն և զԲատուտներն
զՏակն և զՄնկներն, զՆերքնախաղն,
Վերնախաղն, զՄիջնախաղն, զՇերեփն,

զԴուրն, զՍուրն, զԹուրն, զԼարն, զԲուշն,
զԴիրն և Առն և զայլ բազում խազս, զոր
սոսա իբրև զսեռ առեալ և ի զանազան տե-
սակս (1) արդարեն և եղանակեն բարձր (բ)
դիր (դ), անուշ (շ), զարկ (զ), լար (լ),
ծամ (ծ), ցած (ց), սուր (ս) և այլ բազում
արուեստիւր...»:

Այժմ մի համառոտ ակնարկ հատկա-
պես հայկական խազերի մասին:

Երաժշտական խազերի ուսմունքը, ինչ-
պես մեզ մոտ, այնպես էլ ուրիշ ազգերի,
զուտ մասնագիտական գործ է: Պետք է նրա-
նով զբաղվեն և զբաղվում են երաժշտագետ-
մասնագետները: Մեր համեստ գործն այս-
տեղ բանասիրական է, մի համառոտ ակ-
նարկով ցույց տալու թե հայ խազագի-
տությունը ի՞նչ է եղել անցյալում և ի՞նչ
արդյունքների հասել հետագայում,

Պատմությունը լուրջ է նախքան կիրի-
կյան շրջանի հայ երաժշտության ծաղկուն
դարը՝ Շնորհալու դարը—բուն Հայաստա-
նում հայկական խազերի գոյության մա-
սին: Մենք այն կարծիքն ունինք, որ եղել
են այդպիսի խազեր միայն ոչ տարած-
ված, այլ անհատ երաժշտագետ վարդա-
պետների մոտ: Շնորհալու ուղարկած
մարդիկ եկել են Հայաստան և տարել
«Խոսարովային» ոճի շարականների եղա-
նակները. ի՞նչպես կարող էին եղանակ-
ներ տանել, եթե խազավորված չլինեին
այդ եղանակները:

Միջնադարի հայ երաժշտության պատ-
պատմության մեջ առանձնապես շեշտ-
վում է Հաղարծինի վանքի վանահայր Խա-
չատուր Տարոնացու անունը, որպես խա-
զերը արևելք բերողի: Գանձակեցին նրան
անվանելով «այր սուրբ և առաքինի գի-
տությամբ հռչակեալ, մանաւանդ երաժըշ-
տական արուեստին», ասում է, որ «սա
երբ զխազն ի կողմանս յարեկից, զան-
մարմին եղանակսն ի մարմին ածել զարա-
րեալսն յիմաստնոց, որ ցայն ժամանակ չէ
ևր սփռեալ ընդ աշխարհս (էջ 200):

Կիրակոսի այս խոսքերից մեր բանա-
սերներից ոմանք եկել են այն սխալ եզ-
րակացության, որ մինչև 12-րդ դարը

Հայաստանում խազեր չեն եղել և առաջին անգամ արևմուտքից բերել է հաշատուր Տարոնացին: Նույն կարծիքն ունի, և միթիչ էլ առաջ է գնում, Սպիրիդոն Մելիքյանը, որ գրում է՝ «Երաժշտական խազերը բերել է արևմուտքից իմա Փոքր Սսիայից կամ Հունաստանից... հաշատուր Տարոնացին 12-րդ դարում» (Ուրվագիծ, 23):

Նախ որ պատմիչը արևմուտքի անուն չի տալիս, բայց քանի որ ասում է «Ի կողմանս արևելից», ընդունենք, որ հաշատուրը խազերը բերել է Արևմուտքից. բայց ինչու այդ արևմուտքի սահմանները հասցնել մինչև Հունաստան (կամեցել է ասել Բյուզանդիա): Եթե Տարոնացին խազերը բերած լիներ օտար աշխարհից, Գանձակեցին կասեր. «Սա եբեր զխազն ի Հայս» — ոչ թե «Ի կողմանս արևելից» — այսինքն արևելյան կողմերը: Իսկ մենք այն կարծիքն ունինք, որ հաշատուրը եկել է Կիլիկիայից և այնտեղից է բերել Ներսես Շնորհալու և տեղական այլ նշանավոր երաժշտագետների կողմից մշակված խազերը: Կիլիկիայից հայ բնաշխարհը համարում էին Արևելք և այնտեղի եկեղեցականներին արևելեայք:

Այսպես է հասկանում և Գ. Զարբանալյանը, երբ գրում է.

«Պատմիչը (Կիրակոսը) կամանդե, թե ինքը (Տարոնացին) բերած ըլլա խազը արևելքի կողմերը, այսինքն վերին կամ մեծ Հայաստանի մեջ (Պատմ. հայերեն դպրության Ա. 675):

Հայկական խազերի ուսումնասիրության փորձ է անում Սպիրիդոն Մելիքյանը իր «Հունական ազդեցությունը հայ երաժշտության տեսականի վրա (Թիֆլիս, 1914) արժեքավոր աշխատության մեջ: Մենք կարող ենք համաձայնել կամ չհամաձայնել նրա արծարծած խնդիրների լուսաբանությանը, բայց նա լուրջ գործ է կատարել մեր խազագիտության բնագավառում: Նա էջմիածնի մատենադարանում մի առ մի թերթերով ութ ձեռագիր խազավորված շարականներ (1305—1700) գրտել է, որ «Մեր Շարականը մի անգամ

հաշատուրի (Տարոնցի) և նրա աշակերտների ձեռքով խազավորվելուց հետո այնուհետև ոչ մի փոփոխության չի ենթարկվել, հետևապես և նրա մեջ գործածված խազերը իրենց նշանակությամբ 12—13-րդ դարերին են պատկանում և մեր խազավոր գրականության մասնահին շրջանն են կազմում»:

Եվ քանի որ ավելի վաղվա՝ 10 — 11-րդ դարերի խազավորված ձեռագիրներ չեն հայտաբերված մինչև այսօր, ըստ երևույթին Սպ. Մելիքյանի խոսքը, առժամանակ մնում է անհերքելի:

Այդ խազերն էին, որ հասել էին մինչև 18-րդ դարի վերջերը, Գաբասաբալյանի Գրիգոր դպրի ուսումնասիրության նյութ դարձել և ապա 19-րդ դարի խոաշին կեսին՝ ավելի համարձակ վերանորոգման ու նոր մշակումի ենթարկվել Համբարձում Լիմոնձյանի և նրա աշակերտների ջանքերով: Բայց քանի որ 19-րդ դարը չի մտնում մեր ներկա աշխատության ծրագրի մեջ, մենք դարձյալ շարունակենք մեր խոսքը հայ երաժշտության տեսականի և խազերի նվիրված գրականության մասին:

Որքան մեզ հայտնի է, հայ և օտար բանասերների և երաժշտագետների կողմից տպագրվել են բազմաթիվ հոգվածներ: Այդ բոլոր հոգվածների և ուսումնասիրությունների լիակատար ցանկը մենք տալիս ենք «Հայ երաժշտության բիրլիոգրաֆիան» մեր աշխատության մեջ: Այստեղ միայն նշենք այն, որ հատկապես հայկական խազերի ուսումնասիրությամբ սկսել են զբաղվել ղեռ ևս անցյալ դարի կեսերից: Օրինակ՝ Պետերմանը 1851 թվին,

„Über die Musik der Armenier“ աշխատությունը — խազերի տախտակ օրինակներով:

Այնուհետև զբաղվել են Իգնատիոս Կյուրեղյան (Վենետիկի Մխիթարյաններից 1900-ականներին), Պ. Վազներ, Կոմիտաս և Սպիրիդոն Մելիքյան:

Ի՞նչ են ասում իրենց ուսումնասիրությունների մեջ այդ հեղինակները: Նրանք նախ ղտում են առողանության խազերը երաժշտական խազերից, ապա տալիս են պատմական տեղեկանքներ խազերի ծագ-

ման և ուրիշ ազգերի խաղերի հետ ունեցած առընչության մասին, առաջ են բերում հայկական բոլոր խաղերի անունները, որոնց թիվը հասնում է մինչև 200-ի և էլի ուրիշ մանրամասնություններ, բայց ամենազխամուրը խաղերի վերածնությունը այդ հեղինակներից ոչ մեկին չի հաջողվել։ Մեր դարի 10-ական թվականներին, երբ Կ. Պոլսի մամուլում հայ երաժշտության տեսական խնդիրների մասին սկսել էին մի շարք հոդվածներ երևալ, ամենքի հույսը Կոմիտաս վարդապետի վրա էր, որ նա պետք է վերջիվերջո լուծի հայկական խաղերի պրոբլեմը։ Նույնիսկ տեղական քահանաներից մեկը մի մասնավոր նամակով այդ մասին գրում է մեծանուն երաժշտագետին, որ նա բարձրացնի իր հեղինակավոր ձայնը։ Կոմիտասն իր պատասխանը գրում է էջմիածնում 1910-ին, բայց տպագրվում է Կ. Պոլսի «Տաճար» հանդեսում 1914-ին։ Այնքան էլ մխիթարական չէր այդ պատասխանը։ Նա գրում էր.

«... Իրավ է, ես դեռ եմ հայ խաղերի բանալին և նույնիսկ կարող եմ պարզ գրվածքները, բայց դեռ վեջնակետի չեմ հասել, զի յուրաքանչյուր խաղի խորհրդավոր իմաստին թափանցելու համար նույնիսկ տասնյակ ձեռագիրներ պրպտելով ամիսներ են սահում։ Իսկ ձեռքիս տակ եղած խաղերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առայժմ, մի կողմ թողնենք դեռ անանուն խաղերը, որոնք խիստ շատ են։

Առայժմ երկու խոսքով ամփոփեմ, թե ինչ տառեր ունի հայ խաղաբանությունը։

Ա. Ձայնաստիճանի խաղեր

Բ. Ձայնհրանգի խաղեր

Գ. Զարդախաղեր

Դ. Ձայնուժի խաղեր

Ե. Ամանակի խաղեր

Զ. Առոգանության խաղեր

Ը. Կետագրության խաղեր

Թ. Ոճական խաղեր

Ժ. Կապող և զատող խաղեր

ժԱ. Կիսանիշ խաղեր և այլն»։

Թվելով, որ մի այդպիսի ուսումնասիրություն կատարելության հասցնելու համար առաջանում են մի շարք լուրջ խնդիրներ, Կոմիտասն իր նամակ-հոդվածը վերջացնում է այսպես.

«Թող հայ հասարակությունը ներող, մանավանդ համբերող լինի, մինչև որ հնարավոր չափով կատարելապես վերջացնեմ իմ տասնըվեց-ամյակից ավելի տևող տաժանակիր ուսումնասիրությունները։ Հույս ունեմ, թե մոտիկ ապագայում առանձին հատորներով հասարակության սեփականություն պետք է դառնա»։

Նվ այդ «մոտիկ ապագան» այլևս չեկավ դժբախտ արվեստագետի համար։

Նորից անցան մի քանի տասնյակ տարիներ, բայց հայկական խաղերի առեղծվածը դեռ սպասում է իր լուծման։

Եթե մեզանից մոտ 80 տարի առաջ էջմիածնում Գեորգ Դ. կաթողիկոսի ջանքով և Նիկողայոս Թաշճյանի ձայնագրությամբ լույս տեսած Շարականի խմբագրողը՝ Վահրամ եպ. Մանկունին իր առաջաբանում ցավ էր հայտնում հին խաղերի անընթեռնելի լինելու մասին, որ «Ըստ ձայնանիշ խաղիցն անցողիկ զբնիկ և զհարազատ նշանակութիւնսն կամ զօրութիւնս ոչ ոք է, որ գիտիցէ», որովհետև «ամենածախ ժամանակն վարագուրեալ և թագուցեալ իմն է զայն ի մերոց աշաց» ինչպես «զարձանագրութիւնսն բեւեռաձև կամ սեպաձև կոչեցեալս», ապա մենք երեք քառորդ դար անցնելուց հետո չենք կարող պարծենալ որևէ նորությամբ այդ բնագավառում։

Սեպաձև արձանագրություններն ու եզրպատական հիերոգլիֆները կարդացվեցին, իսկ մեր երաժշտական խաղերը մընացին և դեռ մնում են անվերծանելի։ Եթե մի երջանիկ օր մեզ հաջողվի գտնել «խաղերի բանալին», ապա այն ժամանակ մեր աչքերի առաջ կբացվի մի լայնատարած հորիզոն և կիմանանք, թե ինչ եղանակներով են երգվել մեր միջնադարյան եկեղեցական և աշխարհիկ երգերը։